ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 հուլիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

97
(2947)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԽԱԼՎԵԼ Է ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ



Իշխանության ստերի մասին՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է գրել: Հստակ ներկայացրել ենք, թե իշխանականներն իրենց ո՛ր խոստումները չեն իրականացրել, որի արդյունքում տուժել է հասարակությունն ու պետությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը ներկայացրեց մի ծրագիր, որով մինչեւ 2026 թվականը 300 դպրոց ու 500 մանկապարտեզ պետք է նորոգվի, կառուցվի եւ վերակառուցվի: 2021 թվականի օգոստոսի 18-ին ՀՀ Կառավարությունը հաստատել էր այն:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցումով դիմեց նախարարությանը, փորձեցինք հասկանալ՝ ծրագրի վերաբերյալ ինչպիսի կատարողական կա, որ փուլին են հասել:

«Խնդրում ենք տեղեկացնել.

1. «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակում 2021 թվականից առ այսօր քանի՞ դպրոց եւ քանի՞ մանկապարտեզ է կառուցվել:

2. Խնդրում ենք տրամադրել ցանկ՝ ո՞ր մարզերում եւ Երեւանի ո՞ր վարչական շրջաններում են կառուցվել դպրոցները եւ մանկապարտեզները՝ հստակ հասցեներով:

3. Արդյոք նախարարության պաշտոնական հայտարարության համաձայն՝ մինչեւ 2026 թվականը կունենա՞նք կառուցված, հիմնանորոգված, վերանորոգված առնվազն 300 դպրոց եւ 500 մանկապարտեզ»:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից փոխնախարար Արաքսիա Սվաջյանի ստորագրությամբ գրություն ստացանք, որում ասվում էր հետեւյալը. «Մինչեւ 2026 թվականը «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի «Կրթություն» ենթաբաժնում նախատեսվող՝ մինչեւ 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների եւ 500 մանկապարտեզների ծրագրի շրջանակում շինարարական աշխատանքներն ավարտվել են 30 դպրոցներում. կառուցվել է 17 դպրոց, հիմնանորոգվել՝ 11-ը, վերակառուցվել՝ 2-ը:

Վերոնշյալ ծրագրի շրջանակում շինարարական աշխատանքներն ավարտվել են 144 նախադպրոցական ուսումնական հաստատություններում (51 նախակրթարան եւ 93 մանկապարտեզ):

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Թալին խոշորացված համայնքի Արագածավան գյուղի ՔՊ-ական ՋՕԸ պետ Սուրեն Թորոսյանի քրեական գործը, ըստ էության, փակուղի է մտել: Բանն այն է, որ 2024 թվականին այս գործով 2 նիստ է կայացել, ու հիմնականում գործը կանգ առավ այն բանից հետո, երբ քաղաքական իշխանության ճնշման արդյունքում այն քննող դատավոր Անդրանիկ Մնացականյանին ազատեցին դատավորի պաշտոնից: Բանն այն էր, որ դատավորները ներքին «չաթ» էին ունեցել, որտեղ նրանցից մի քանիսը քննադատել էին իշխանություններին, ու դատավոր Մնացականյանն էլ ընդամենը քննադատություններին «հավանելու սմայլիկ» էր դրել, ու նրան, քննադատած դատավորների հետ, ստիպեցին լքել դատական համակարգը: 1 ամսվա ընթացքում այս առիթով 4 դատավոր լքեց համակարգը: Հիշեցնենք, որ 2023թ. հունիսի 7-ին ոստիկանության Թալինի բաժնում հաղորդում էր ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 19:00-ի սահմաններում, Արագածավան բնակավայրում գտնվող ավտոմեքենաների լվացման կետի մոտ ծագած վիճաբանության ընթացքում, բնակավայրի բնակիչ ՔՊ-ական Սուրեն Թորոսյանը գազաբալոնով գազ է փչել նույն բնակավայրի բնակիչ 24-ամյա Ա.Ս.-ի դեմքին, փայտով հարվածներ հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածք: Վերջինս ստացել է ամբուլատոր բուժօգնություն: Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ Արագածոտնի մարզային քննչական վարչության Թալինի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ: 2023թ. հունիսի 8-ին՝ ժամը 00:15-ին, Ս. Թ.-ն ոստիկանության աշխատակիցների կողմից ներկայացվել է Թալինի քննչական բաժին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանի, հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրոջ ու այլ անձանց մասով գործը երեկ մուտք արվեց Հակակոռուպցիոն դատարան, ու բոլորը, շունչները պահած, սպասում են, թե որ դատավորին այն կմակագրվի: Հիշեցնենք, որ էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանին «Սիներջիի» վերաբերյալ քրեական գործով մեղադրանք է առաջադրվել, եւ նա տեւական ժամանակ կալանքի տակ էր ու վերջերս ազատ արձակվեց: Բանն այն է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծառայություն ձեռք բերելու մրցույթի ընթացքում՝ կատարված առերեւույթ չարաշահումների վերաբերյալ քրեական վարույթով քրեական հետապնդում է հարուցվել 8 անձի նկատմամբ: Մասնավորապես՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մի շարք պաշտոնատար անձինք, իրենց ղեկավար պաշտոնատար անձի հանձնարարությամբ, մրցույթի ընթացքում հանդիպումներ ու հեռախոսազրույցներ են ունեցել «Ս» ընկերության ներկայացուցիչների հետ, նրանց հետ քննարկել մրցույթի պայմանները, ընդհուպ՝ նրանց տրամադրել մրցակից «Հ» հիմնադրամի կողմից հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը եւ նրանց օժանդակությամբ՝ մրցույթի ընթացքում սահմանել այնպիսի նոր կամ փոփոխված պայմաններ, որոնց հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը կարող են դիտվել չհամապատասխանող՝ հնարավորություն տալով ընկերությանը հեռացնել մրցույթից: Սույն քրեական գործով մեղադրյալ էր ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը, որը խոստովանեց, որ հանցանք է գործել, ու գործուն զղջալու հիմքով՝ նրա եւ եւս մի քանի անձի մասով գործը կարճվեց, իսկ ահա հայտնի հաղորդավարուհի Լուսինե Թովմասյանի սկեսրայրը՝ «Սիներջի» ընկերության ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը, ինչպես նաեւ նախկին նախարար Վահան Քերոբյանը դեռ կռիվ կտան դատարանում:



ԱԺ-ում պարգեւատրումների շքերթը շարունակվում է: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ ԱԺ աշխատակազմի պետական ծառայողները այս ամսվա ընթացքում երկրորդ անգամ են պարգեւատրվում: Նախ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն էր Սահմանադրության օրվա առիթով միանվագ պարգեւատրել պատգամավորներին եւ ԱԺ աշխատակազմին, հիմա էլ ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, որն արձակուրդում գտնվող Ալեն Սիմոնյանին է փոխարինում, կրկին պարգեւատրել է ԱԺ պետծառայող աշխատակիցներին: Ազգային ժողովի կայքից տեղեկանում ենք, որ Ռուբինյանի կարգադրությամբ, ԱԺ աշխատակազմի պետական ծառայողները միանվագ դրամական պարգեւատրում են ստացել. թե ինչու են ամռան այս ամիսներին ԱԺ-ում այսքան պարգեւներ շռայլվում, այն դեպքում, երբ նիստեր չեն էլ հրավիրվում, հիմնավորված չէ:

ԶՐՈՒՅՑ

ԿԵՂԾ ՕՐԱԿԱՐԳԸ ՉՊԵՏՔ Է ՇԵՂԻ ԳԼԽԱՎՈՐԻՑ

Երեւանում կայացել է «Սահմանադրության փոփոխության հրամայականը» թեմայով քննարկում, որին հրավիրված են եղել թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր գործիչներ: Իշխանության ներկայացուցիչները քննարկմանը չեն մասնակցել:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է քննարկման մասնակիցներից ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանի հետ:

-Պարոն Մինասյան, այսօր անցկացվում է քննարկում «Սահմանադրության փոփոխության հրամայականը» թեմայով: Նախ հասկանանք՝ ինչ իրավիճակ է. մի կողմից Ադրբեջանի նախագահն է իր ամենօրյա հայտարարություններով պահանջում եւ ասում. «Մինչեւ Սահմանադրություն չփոխեք՝ խաղաղության պայմանագիր չի լինելու», մյուս կողմից էլ Նիկոլ Փաշինյանը՝ սահմանադրության օրվա առթիվ ունեցած իր ուղերձում ասաց, որ մեզ պետք է ամբողջովին նոր Սահմանադրություն: Սակայն իշխանության ներկայացուցիչները դա փորձում են ներկայացնել որպես իրենց նախաձեռնություն, որում Ալիեւի միջամտությունը չկա:

-Նախ արձանագրեմ, որ այսօրվա թեման մեր կողմից մերժելի է: Չի կարող սահմանադրական փոփոխությունը, այն էլ այսօրվա հարցերի ներքո, լինել հրամայական: Հրամայականը հենց Սահմանադրությունը տապալած ուժի հեռացումն է, որը ո՛չ միայն ժողովրդավարական, այլեւ իրավական պետության բոլոր կանոններին հակասելով եւ որեւէ կարգավորում չպահելով՝ արդեն շուրջ վեց տարի է իրականացնում է պետության կառավարումը: Բոլորին էլ պարզ է, թե ինչ դժբախտություններ եւ արհավիրքներ է իշխանությունը բերել եւ շարունակում է բերել:

Ինչ վերաբերում է օտարերկրյա պահանջներին, թշնամական երկրների պահանջներին տուրք տալով սահմանադրական փոփոխությունների գնալուն, ապա սա ոչ միայն մարդկային ուղեղից դուրս է, այլ նաեւ ուղիղ եւ հրապարակային հպատակություն է նշանակում թշնամուն, որը ընդունելի չէ, մերժելի է, դատապարտելի է եւ պարզապես չի կարող քննարկման առարկա դառնալ մեր հասարակության շրջանում: Որքան էլ, որ իշխանությունը փորձի իր պարտություններն ու հանձնումները ներկայացնել որպես Սահմանադրությունը փոխելու իրենց ցանկություն, միեւնույնն է՝ այն աբսուրդի աստիճանի է հասնում: Սահմանադրությունը Հայաստանին ոչ մի անգամ չի խանգարել խաղաղության օրակարգ ունենալ: Ավելին՝ Հայաստանի համար խաղաղության օրակարգը տարածաշրջանում ուժեղ պետություն, ուժեղ Հայաստան լինելն է, Արցախի ժողովրդի իրավունքները պաշտպանող Հայաստան ունենալն է, սեփական ազգի ու ժողովրդի արժանապատվությունը պահելն է, այլ ոչ թե ստորացվելը, հանձնվելը, թշնամու օրակարգը առաջ մղելն ու անունը «խաղաղություն» դնելը: Իշխանությունն իր կեղծ օրակարգով չի կարող ժողովրդին շեղել բուն խնդրից, որը այս դավաճան իշխանության փոխարինումն է ավելի պատասխանատու, ազգային եւ ուժեղ Հայաստան կերտող իշխանությամբ:

-Պարոն Մինասյան, այսօր ՁԼՄ-ում տեղեկություն տարածվեց այն մասին, որ Նիկոլ Փաշինայնը, ի վերջո, բանակցությունների ընթացքում համոզել է, որ Սահմանադրության փոփոխության այս գործընթացները հերթական ընտրություններից հետո լինեն՝ նոր կրքեր չբորբոքելու համար: Կարո՞ղ է արդյոք նման զարգացում տեղի ունենալ:

-Ես չգիտեմ՝ Նիկոլ Փաշինյանն ում մոտ ինչ է ասում, սակայն ակնհայտ է, որ նա ուղեծրից դուրս է եկել եւ գտնվում է ադրբեջանա-թուրքական ուղեծրի ուղիղ ազդեցության տակ: Առաջարկում եմ առհասարակ չքննարկել նրա ասածները, առաջարկում եմ նրան տուն ուղարկել. թող գնա՛ եւ թողնի՝ երկիրը դուրս բերեն այս վիճակից, հակառակ դեպքում փորձելու է անդադար շարունակել ատելություն սերմանել հասարակության մեջ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

81 ՄԼՆ ԵԿԱՄՈՒՏ, ՀԻՓՈԹԵՔՈՎ ԲՆԱԿԱՐԱՆ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը մինչեւ նախարար դառնալը, 2018 թվականի հեղափոխությունից սկսած, եկել էր իշխանության եւ դարձել էր Ազգային ժողովի պատգամավոր: Իսկ մինչեւ պատգամավոր դառնալը հասարակ դասախոս էր, ով աշխատում էր «Այբ» կրթական հիմնադրամում եւ ԵՊՀ պատմության ֆակուլտետում:

ԵՊՀ պատմական գիտությունների թեկնածու, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը հայտարարագրել է մեկ անհատական բնակելի տուն Արմավիրի մարզի Փարաքար համայնքում, որը ձեռք է բերել 1956 թվականին, սակայն ինքը՝նախարարը, ծնվել է 1989 թվականին:

Նախարար Մկրտչյանը հայտարարագրել է 2019 թվականին ձեռք բերված 2012 թվականի արտադրության MERCEDES-BENZ մակնիշի տրանսպորտային միջոց:

Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 7,8 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝3,5 մլն դրամ:

Նախարար Նարեկ Մկրտչյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 81 մլն 793 հազար դրամ, որից 21 մլն 580 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից: Եկամուտներից գրեթե 52 մլն դրամը վարկեր են «Արարատ» բանկից եւ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ» բանկից:

Նախարարը պաշտոնին զուգահեռ շարունակում է իր դասախոսի կարիերան՝աշխատելով Ամերիկյան համալսարանում եւ որպես աշխատանքի վարձատրություն ստանում է 3 մլն 269 հազար դրամ:

Նարեկ Մկրտչյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 47 մլն 697 հազար դրամ, որը անշարժ գույքի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է, որի համար նախարարը ՀՀ ՊԵԿ-ից ստացել է 4 մլն 84 հազար դրամ եկամուտ. այն եկամտահարկի վերադարձի օրենքով հիփոթեքի մայր գումարի մնացորդը մարելու համար է: Հայտարարագրից տեղեկանում ենք, որ անշարժ գույքը բնակարան է՝ձեռք բերված «Արսալեդա» ՍՊԸ-ից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԲԱՐԴ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանն ու Ադրբեջանն անհավանական առաջընթաց են գրանցել եւ երկար ճանապարհ են անցել բանակցություններում, բայց խաղաղության համաձայնագրին հասնելու համար կողմերից պահանջվում են որոշ բարդ ընտրություններ եւ դժվար փոխզիջումներ: Այս մասին լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում նշել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը:

«Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության համաձայնագիրը մեծ նշանակություն կունենա այդ երկրների եւ տարածաշրջանի խաղաղության, կայունության, անվտանգության համար: Համաձայնությունը հնարավոր է, բայց դա երկու կողմերից պահանջում է կատարել որոշ բարդ ընտրություններ եւ դժվար փոխզիջումներ», - նշել է Միլլերը:

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Ռ. ՌՈՒԲԻՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կարգադրությամբ՝ Թբիլիսի պատվիրակություն կմեկնի:

Կարգադրության մեջ ասվում է. «Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով եւ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով՝ կարգադրում եմ. աշխատանքային այցով 2024 թվականի հուլիսի 25-26-ը Թբիլիսի (Վրաստան) գործուղել Ազգային ժողովի Հայաստան-Վրաստան բարեկամական խմբի ղեկավար, Ազգային ժողովի նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանին, Ազգային ժողովի պատգամավորներ Շիրակ Թորոսյանին, Վահագն Ալեքսանյանին եւ Արծվիկ Մինասյանին, ինչպես նաեւ Ազգային ժողովի աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջխորհրդարանական կապերի եւ եվրահնտեգրման բաժնի գլխավոր մասնագետ Գոհար Մանուկյանին:

Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դ. Առաքելյանին՝ գործուղման հետ կապված օրապահիկի եւ ճանապարհածախսի վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին՝հաշվի առնելով Ազգային ժողովի նախագահի՝ 2018 թվականի մայիսի 1-ի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի աշխատողների գործուղումների կազմակերպման եւ գործուղման ծախսերի հատուցման կարգը հաստատելու մասին» Կ-127-Ա կարգադրության պահանջները:

Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված գիշերավարձի վճարումը կատարում է հրավիրող կողմը»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՉ ՀԱՐՑ ԷՐ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հուլիսի 15-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Արմավիրի գրասենյակում անցկացվել է ընդլայնված կազմով նախաձեռնող խմբի նիստ:

Նիստին մասնակցել են ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, ԱԺ պատգամավորներ Արուսյակ Մանավազյանը, Ալխաս Ղազարյանը, Տաթեւ Գասպարյանը, մարզի համայնքների ղեկավարները, ավագանու անդամներ, կուսակցության անդամներ:

Այս մասին «Ֆեյսբուք»-ի իր էջում հայտնել է Արմավիրի մարզպետ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Արմավիրի տարածքային խորհրդի նախագահ Դավիթ Խուդաթյանը:

Նիստի օրակարգում մարզի առողջապահության համակարգին վերաբերող հարցն է եղել:

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը ներկայացրել է ոլորտին վերաբերող հարցերը, առողջապահության ապահովագրության բարեփոխումը, Արմավիրի մարզում առողջապահության որակի բարձրացմանն ուղղված առաջիկա անելիքները, ենթակառուցվածքների նորացման ծրագիրը, պատասխանել կուսակցականների հարցերին:

Կուսակցականները հանդես են եկել թեմային առնչվող ելույթներով:

ԼԱՎՐՈՎԸ ԺԱՄԱՆԵԼ Է ՆՅՈՒ ՅՈՐՔ

ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը ժամանել է Նյու Յորք՝ մասնակցելու ՄԱԿ-ի միջոցառումներին, հայտնում է ՌԻԱ «Նովոստի»-ն: Մասնավորապես, երեքշաբթի եւ չորեքշաբթի՝ հուլիսի 16-17-ը, նա նախագահելու է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ երկրների ԱԳ նախարարների մակարդակով բաց բանավեճերը:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահությունը հուլիսի 1-ից մեկ ամսով անցել է Ռուսաստանի Դաշնությանը:

Լավրովը երեքշաբթի կնախագահի բազմակողմ համագործակցության վերաբերյալ բաց բանավեճը:

ՌԴ արտաքին գործերի փոխնախարար Սերգեյ Ռյաբկովը լրագրողներին ասել է, որ ԱՄՆ-ն, Նյու Յորքում կայանալիք միջոցառումների շրջանակում, Լավրովի եւ Միացյալ Նահանգների պետքարտուղար Էնթոնի Բլինկենի միջեւ հանդիպում չի խնդրել:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Սիրիայում ավարտվել է խորհրդարանական ընտրությունների քվեարկությունը եւ սկսվել է ձայների հաշվարկը, հայտնում է Սիրիայի պետական SANA գործակալությունը:

Սիրիայում տեղի են ունեցել Ժողովրդական խորհրդի (խորհրդարանի) ընտրություններ: Ավելի քան 1,5 հազար թեկնածուներ պայքարել են Սիրիայի խորհրդարանի 250 տեղի համար:

Երկրում եղել է ավելի քան 8,1 հազար ընտրատեղամաս: Ընթացիկ խորհրդարանական ընտրությունները Սիրիայի համար չորրորդն են՝ 2011 թվականին երկրում զինված հակամարտության սկսվելուց ի վեր:

Մ. ԱՍԼԱՆՅԱՆԸ ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ

ԱՌԱՋԱԴՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅԵ ՆՈՐԻՑ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԻ

«Անկեղծ ասած, ես հեռ եմ մնացել մեր երկրի փոփոխությունների դինամիկայից: Ես, որ գնացել եմ ՔԿՀ, մեծ երկիր էր: Հիմա չգիտեմ՝ ինչ է փոխվել, մարդկությունն էլ է գուցե փոխվել: Այնպես որ ո՛չ սպասում էի, ո՛չ էլ չէի սպասում»: Այս մասին երեկ՝ հուլիսի 16-ին՝ ՔԿՀ-ից դուրս գալուց հետո, լրագրողների հետ զրույցում ասաց Վանաձորի ընտրված քաղաքապետ Մամիկոն Ասլանյանը՝ պատասխանելով հարցին՝ արդյոք սպասելի՞ էր հենց այդ օրը իր նկատմամբ ընտրված կալանքը գրավով փոխելու վերաբերյալ հարցին:

Անդրադառնալով նրան, թե ինչը փոխվեց, որ իրեն ազատ արձակեցին, նա պատասխանեց. «Չգիտեմ՝ ինչը փոխվեց: Ի դեպ, դատավոր կոչված որեւէ վկա ինձ մեղսագրվող գործի հետ որեւէ առարկայական բան չի կարող ասել: Ինձ մեղսագրվող ամբողջ փաթեթը կապված է փաստաթղթաշրջանառության հետ, եւ որեւէ քաղաքացի չի կարող համայնքի ղեկավարի կողմից ընդունված փաստաթղթերի իրավացիությունը կամ ոչ իրավացիությունը հավաստել»:

Հարցին՝ գուցե պայմանավորվածություն կա՝ ազատ արձակվելու դիմաց հաջորդ ընտրություններին չառաջադրվելու վերաբերյալ, նա պատասխանեց, - «Եթե պայմանավորվածություն լիներ, ես այստեղ չէի լինի: Ոտքից գլուխ քաղաքական հետապնդման պրոցես է սա»:

Ինչ վերաբերում է հարցին, թե հնարավոր է, որ երբ ցանկանա կրկին քաղաքապետ դառնալ՝նորից կկալանավորվի, Մամիկոն Ասլանյանն արձագանքեց. «Իհարկե, մեր երկրում ոչինչ չի բացառվում. մենք տեսնում ենք, որ անգամ երրորդական կարգի պաշտոնյաներ, որոնք Վանաձորի քաղաքապետի ներկապնակում ոչինչ չեն փոխում, քաղաքական հետապնդումների են ենթարկվում, եւ ոչ միայն Վանաձորում, այլեւ տարբեր ուրիշ համայնքներում:

Ասլանյանի խոսքով՝գուցե հետագայում ինքն այս ամենին անդրադառնա ամենայն մանրամասնությամբ, հիմա ասում է՝ սա քրեական ու քրեական դատավարական հարց չէ, այստեղ մասնակցություն է ունեցել նաեւ վարչական դատարանը, որը կալանք է դրել ավագանու նիստերի վրա:

Անդրադառնալով քաղաքականությամբ զբաղվելու վերաբերյալ լրագրողների հարցին՝ Մամիկոն Ասլանյանն ասել է. «Չգիտեմ՝ իմ ֆիզիկական վիճակը, հոգեվիճակը ոնց է: Ես ոչ մի տեղ չեմ կորչելու, ոչ մի բանից չեմ խուսափում: Իմ մոտեցումները չեն փոխվել, ոչնչից չեմ վախեցել, չեմ խեղճացել, կամքս չի կոտրվել: Ընդամենը մարտավարական առումով պետք է հասկանամ իմ անելիքները: Եթե մինչեւ այժմ տուժել եմ միայն ես, չեմ ցանկանա, որ տուժեն նաեւ այլ մարդիկ»:

Մ. Ասլանյանը հաստատեց տարածված այն տեղեկությունները, որ իր՝ ՔԿՀ-ում գտնվելու ընթացքում առաջարկել են կոալիցիոն հուշագիր ստորագրել:

«Անձնավորված խոսակցություններ չեմ ուզում ի հայտ բերել, դրանց մասին հրապարակային խոսել. բնականաբար, եղել է առաջարկություն, որ կոալիցիոն հուշագիր ստորագրվի: Ես էլ ասել եմ, որ ընտրական այս տրամաբանության մեջ, որը տեղի էր ունեցել Վանաձորում 2021թ. չի կարելի: Կարող էր լինել աշխատանքային, ոչ քաղաքական համագործակցություն»,- ասաց նա:

Ճշտող հարցին՝ որ ուժի կողմից է իրեն կոլաիցիոն հուշագիր ստորագրելու առաջարկություն եղել, Մամիկոն Ասլանյանն արձագանքեց. «Ես աշխատանքային համագործակցության մասին հայտարարություն եմ տարածել, որ պատրաստ եմ ոչ քաղաքական, աշխատանքային համագործակցության: Այնտեղ եղել է քաղաքական համագործակցության խնդիր, որը ես մերժել եմ»:

Ավելի վաղ հայտնել էինք, որ ավելի քան 2.5 տարի բանտում անցկացնելուց հետո՝ Մամիկոն Ասլանյանը 10 միլիոն դրամ գրավով ազատ է արձակվում:

Նշենք, որ Ասլանյանն անազատության մեջ էր հայտնվել 2021-ի դեկտեմբերին՝ տեղական ընտրություններում իր առաջնորդած նախընտրական դաշինքի հաղթանակից օրեր անց: Նա մեղադրվում է պաշտոնավարման տարիներին, կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով, Վանաձորի հողերն օտարելու համար: Վանաձորը 5 տարի ղեկավարած Ասլանյանը պնդում է՝ քաղաքական հետապնդման է ենթարկվում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ

ԱՄՆ պետքարտուղարի խոսնակը, անդրադառնալով հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացին, հայտարարել է, թե «կարծում ենք, որ համաձայնության հասնելը հնարավոր է, բայց դա պահանջում է երկու կողմերից բարդ որոշումներ եւ լուրջ փոխզիջումներ ընդունել»: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ընդդիմադիր պատգամավոր Տիգրան Աբրահամյանը:

«Ի՞նչ է ստացվում. Հայաստանը վերջին 6 տարիներին, հնարավոր բոլոր ուղղություններում զիջել է դիրքերը, ստացել պատերազմ, ագրեսիա, ճնշումներ, սպառնալիքներ, շանտաժ, ունեցել հսկայական մարդկային ու տարածքային զիջումներ, սակայն պարզվում է, որ նրանից դեռ բարդ որոշումների եւ լուրջ զիջումների ակնկալիք կա:

Սա՞ է խաղաղության հասնելու միջազգային պատկերացումը: Այս պարագայում միայն կարելի է կռահել Ադրբեջանի ու Թուրքիայի սպասելիքները, որոնք պարբերաբար նաեւ հրապարակային են հնչեցվում:

Ու դեռ մեր ժողովրդին էլ փաշինյանական իշխանությունը համոզում է, որ իրենք երկիրը խաղաղության են տանում, այն դեպքում, որ հերթական անգամ հանրությանը, այս դեպքում՝ նաեւ միջազգային դերակատարների շուրթերով նախապատրաստում են նոր զիջումների», - գրել է նա:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ՝ ԹԵՀՐԱՆՈՒՄ

Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն է տարածել Թեհրանում Ադրբեջանի դեսպանատան վերաբացման եւ դիվանագիտական անձնակազմի վերադարձի վերաբերյալ: Հայտարարության մեջ մասնավորապես նշվում է. «Ողջունում ենք Թեհրանում Ադրբեջանի դեսպանատան վերաբացումը: Տարածաշրջանի կայունության եւ համագործակցության ոգու համար կարեւորում ենք Ադրբեջանի եւ Իրանի միջեւ հարաբերությունների կարգավորումը եւ դիվանագիտական կապերը կրկին բնականոն մակարդակի հասցնելը:

Հիշեցնենք, որ 2023-ի հոկտեմբերի 27-ին Թեհրանում Ադրբեջանի դեսպանատան վրա զինված հարձակում էր եղել, ինչի հետեւանքով մահացել էր դեսպանատան անվտանգության աշխատակիցը, իսկ երկուսը՝ վիրավորվել: Հարձակումից հետո՝ հոկտեմբերի 29-ին, Բաքուն դադարեցրել էր դեսպանատան գործունեությունը, իսկ դիվանագիտական անձնակազմը վերադարձել էր Բաքու:

ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞Ր ՈՉ

ԴԱՏԱԽԱԶԻ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԸ

Գեղարքունիքի մարզի դատախազության դատախազ Կարեն Խաչատրյանի առեղծվածային մահվան դեպքը շարունակում է շատերի համար հարցեր առաջացնել, թե ինչպես երկար տարիներ զենք ունեցող եւ զենքին լավ տիրապետող անձը կարող էր անզգուշության արդյունքում զենքի կրակոցից մահանալ:

Ու մինչ իրավապահները քննում են այս դեպքը՝ «Ժողովուրդ» օրաթերթին ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել Կարեն Խաչատրյանի շուրջ կատարվող դեպքերից:

Մասնավորապես, նա մեկ տարի առաջ էր ազատվել պաշտոնից, սակայն դատախազության նրա աշխատասենյակը մեկ տարի շարունակ որեւէ մեկը չէր մտել, եւ ավելին՝ ըստ դատախազության մեր աղբյուրների՝ անգամ ազատվելուց հետո իր սենյակը չէր հանձնում:

Նշենք, որ Գեղարքունիքի դատախազության դատախազ Կարեն Խաչատրյանը 2023 թվականի օգոստոսի 2-ին ազատվել էր պաշտոնից: Նրա եղբայրը՝ Կամո Խաչատրյանը եւս դատախազ է եղել եւ աշխատել է Գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ ու պաշտոնից ազատվել է 2023 թվականի մարտի 27-ին:

2024թ. հուլիսի 7-ին՝ ժամը 00:35-ին, «Վարդենիս» ԲԿ-ից ահազանգ է ստացվել այն մասին, որ Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղում կանչով մեկնած շտապօգնությունն արձանագրել է 54-ամյա Կարեն Խաչատրյանի մահը՝ հրազենի գործադրմամբ:

Դեպքի փաստով 2024թ. հուլիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ՀՀ ՔԿ Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության շրջանակում ստացված խիստ նախնական, քննությամբ դեռեւս լիարժեք ստուգման ենթակա տվյալներով՝ Կ. Խաչատրյանը նույն օրը՝ ժամը 00:30-ի սահմաններում, իրենց տանը իրեն ամրակցված «BERETTA APX» տեսակի հրազենը մաքրելու ժամանակ, զենքի հետ անզգույշ վարվելու հետեւանքով, արձակված կրակոցից ստացել է կյանքի հետ անհամատեղելի հրազենային վնասվածք:

Դեպքի վայրի զննությամբ, բնակարանի հյուրասենյակում հայտնաբերվել է Կ. Խաչատրյանի մարմինը՝ աջ աչքի հատվածում հրազենային վնասվածքով: Առգրավվել է հիշյալ հրազենը, մեկ կրակված պարկուճ, վերցվել են արյան հետքեր:

Նշանակվել են դիակի դատաբժշկական, դատաձգաբանական, դատակենսաբանական եւ դատաքիմիական փորձաքննություններ:

Դեպքի հանգամանքները պարզելու համար ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վարդենիսի բաժնին տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարություն:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՏԱՀԱԿԱՆ

ՆՌՆԱԿԻ ՊԱՅԹՅՈՒՆ ՈՒ 14 ՄԵՂԱԴՐՅԱԼ

Իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանը սոցցանցի իր էջում հայտնում է. «Այսօր քննչական մարմինը հունիսի 12-ի գործով հայտնել է նախաքննության ավարտ: 14 մեղադրյալների մասով գործն ուղարկվում է դատարան:

Մեղադրյալներից 4-ը բանտային կալանքի տակ են (Կարմեն Մնացականյան, Ավետիք Ջիլավյան, Արմենակ Խաչատրյան, Լեւոն Սաֆարյան), մյուսները՝ տնային կալանքի»:

ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

2 տարի 7 ամիս անազատությունից հետո քաղբանտարկյալ Մամիկոն Ասլանյանի խափանման միջոցը փոխվել է. դատարանի որոշմամբ նա ազատ է արձակվել 10 մլն դրամ գրավի դիմաց:

Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Սարգիս Դադոյանը մասնակիորեն բավարարել է փաստաբանի միջնորդությունը՝ ստորագրությամբ ազատ արձակելու փոխարեն կիրառելով գրավ:

ՈՎ Է ԻՆՔՆԱՀՐԿԻԶԿՄԱՆ ՓՈՐՁ ԱՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հատնի է դարձել, թե ով է եղել այն քաղաքացին, որը բենզինով մտել է Գլխավոր դատախազություն եւ պահանջել հանդիպում դատախազի հետ:

Ըստ մեր տեղեկությունների՝ այդ քայլին գնացել է 36-ամյա Հրաչ Պիրոյանը, որը Արթիկ քաղաքում է հաշվառված:

«Ժողովուրդ» օրաթերթը արդեն հայտնել էր, որ շաբաթ օրը ուշագրավ դեպք է եղել Գլխավոր դատախազության մոտ: Տնային կալանքի տակ գտնվող քաղաքացին, դժգոհ լինելով իր շուրջ կատարվող իրավական գործընթացներից, գնացել է գլխավոր դատախազության բակ ու պահանջել հանդիպում կազմակերպել դատախազի հետ: Արդյունքում՝ իր հորդորը ու պահանջը չի կատարվել եւ Գլխավոր դատախազության շենքի մուտքի ընդունարանում նա բենզին է լցրել իր վրա՝ փորձելով ինքնահրկիզվել, սակայն ոստիկանները կանխել են նրա գործողությունները:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն, երբ փրկարար ծառայությունը հասել է դեպքի վայր՝ ոստիկանությունը քաղաքացու գործողությունները կանխած է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթը Գլխավոր դատախազությունից փորձեց պարզել, թե ինչ է կատարվել, ի պատասխան՝ հայտնեցին.

«Խարդախության համար մեղադրվող, տնային կալանքի տակ գտնվող քաղաքացին ցանկացել է հանդիպել գործը հսկող դատախազին: Ոստիկանը բացատրել է, որ ոչ աշխատանքային օր է ու հորդորել է դիմում թողնել, սակայն քաղաքացին չի ենթարկվել ոստիկանի հորդորին ու բենզինը լցրել է իր վրա՝ ցանկանալով ինքնահրկիզվել, ինչը, սակայն, կանխվել է ոստիկանների կողմից»:

ԻՐԱՎԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԴԱԴԱՐԵՑՐԵՑ ԴԱՏԱՎՈՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԴԽ նիստի ժամանակ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը հայտնեց, որ Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է կայացրել դադարեցնելու դատավոր Աննա Դանիբեկյանի լիազորությունները՝ քննելով արդարադատության նախարարության հարուցած կարգապահական վարույթը: Որոշումը ընդունվել է միաձայն:

Նախարարության գնահատմամբ՝ Դանիբեկյանը կոպիտ անփութությամբ խախտել է դատավորի վարքագծի կանոնները, որի հետեւանքով ամբաստանյալները, այդ թվում՝ Ռոբերտ Քոչարյանը, ազատվել են պատասխանատվությունից՝ հանցանքի վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. ««Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ-ում տրամադրվածությունն այնպիսին է, որ դատավոր Աննա Դանիբեկյանի լիազորությունները դադարեցվեն, իսկ թե ինչպես կքվեարկեն ԲԴԽ անդամները, ցույց կտան զարգացումները:

ՀԱՐՑԸ ՆՈՐ ԹԱՓ Է ՍՏԱՆՈՒՄ

ԲԴԽ-ում քննվում է դատավոր Վահե Դոլմազյանի կարգապահական վարույթը:

Նշենք, որ նա քննում է մի շարք նախկին պաշտոնատար անձանց վերաբերյալ քրեական գործեր, որոնցից մեկը ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանն է:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Արդարադատության նախարարությունը ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի մասով գործընթաց է սկսել: Երեկ (խմբ.) նախարար Գրիգոր Մինասյանը նշեց, որ «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակումից հետո արդարադատության նախարարության վերահսկողական վարչությունը դեպքի վերաբերյալ 07.08.2023 թվականին ծառայողական քննություն է սկսել:

Քննության արդյունքները դեռ չկան: Իսկ ի՞նչ դեպքի մասին է խոսքը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության արդեն նախկին պետ Սերգեյ Ատոմյանի հեռացումը առաջին հերթին կապված է ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի հետ: Մասնավորապես, գրել էինք, որ օգոստոսի 1-ին, երբ ԱԱԾ մեկուսարանից պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանին տեղափոխել են Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի նիստին, ճանապարհին Դավիթ Տոնոյանը խնդրել է ուղեկցողներին, որ թույլ տան կարճ տեսակցել մորը, հետո շարունակել ճանապարհը դեպի Ազգային ժողով: Տոնոյանին ուղեկցող ծառայողները կապ են հաստատել Սերգեյ Ատոմյանի հետ՝ թույլտվություն ստանալու համար:

ՔԿՀ պետը թույլ է տվել, որ Տոնոյանը գնա տուն ու տեսակցի մորը՝ պայմանով, որ ոչ ոք չիմանա: Ասել է թե՝ նախարարությունում ստուգում են, թե ինչպես է կալանքի տակ գտնվող նախկին նախարարը գնացել տուն: Հիշեցնենք, որ օգոստոսի 5-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, Սերգեյ Ատոմյանն ազատվեց Քրեակատարողական ծառայության պետի պաշտոնից, որը զբաղեցնում էր 2021 թվականի սեպտեմբերի 15-ից: Ի դեպ, դեռեւս ՔԿ ծառայության պետի պաշտոնը դատարկ է, ու չեն կարողանում թեկնածու գտնել»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 15-ից հուլիսի 16-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 137 դեպք որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԸ ՉԱՓԱԶԱՆՑ ԹԱՆԿ ԵՆ

Դիլիջանի հյուրանոցներում բավականին թանկարժեք սպասարկում է գործում, որի պատճառով տուրիստական սեզոնին քաղաքի շատ հյուրանոցներ կիսադատարկ են. հայաստանցիները, Դիլիջանում հանգստանալու փոխարեն, գերադասում են արտերկրում, ավելի քիչ ծախսով հանգստանալ: Դիլիջանցիների «Դիլիջանցիք» ֆեյսբուքյան խմբում այդ թեմայով քննարկում է, մտահոգություն կա, որ հյուրանոցների թանկ գները վնասում են Դիլիջանի զբոսաշրջային իմիջին, նշվել է, որ այդքան թանկ գներով հյուրանոցներն օվկյանոսի ափին չեն, կամ Փարիզից հրավիրված հմուտ խոհարար չունեն: Այդ խմբում քննարկման մասնակիցներից հայտնել են, որ Դիլիջանում կան նաեւ ավելի մատչելի գնով հյուրատներ: Քննարկման մասնակիցներից մեկն էլ գրել է, որ թանկ հյուրանոցները գրոշներ են վճարում ծանր գործ անող աշխատողներին. «Իսկ ամենաահավորը, որ այդ «թիվ կրակողները» իրենց աշխատակիցներին գրոշներ են տալիս միայն. 4-5 հոգու գործը բարդում մի մաքրուհու վրա (30 սենյակ մաքրել 1 օրում) ու վճարում 3000-4000դր. օրը. իսկ եթե մի ուրիշն էլ բացում է նոր հյուրանոց ու «լավություն» անում՝ 5000դր. վճարելով, ուրեմն 7 հոգու տեղ է ծանրաբեռնելու»:

ՄԱՐԶՊԵՏԸ ԱՆՏԵՂՅԱԿ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք, թե 2023-2024 ուսումնական տարում Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ընդհանուր թվով քանի՞ ուսուցիչ է մասնակցել կամավոր ատեստավորմանը, նրանցից քանիսը ատեստավորումից ինչ արդյունքներ են ունեցել: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզպետի աշխատակազմը չունի տեղեկատվություն՝ 2023-2024 ուսումնական տարում քանի ուսուցիչ է ներկայացրել հայտ՝ մասնակցելու կամավոր ատեստավորմանը, քանի որ այդ գործընթացը պարտադիր գործընթաց չէ /կամավորության սկզբունքով է/: Արդյունքներից առկա է հետեւյալ տեղեկատվությունը՝ 60-69 միավոր՝ 36 ուսուցիչ, 70-79 միավոր /30%/ 44 ուսուցիչ, 80-89 միավոր /40%/ 22 ուսուցիչ, 90-100 միավոր /50%/ 4 ուսուցիչ»:

Մարզպետը տեղեկություն չունի, չի էլ ուզում ունենալ, թե մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցների քանի՞ ուսուցիչ է «կտրվել» ատեստացիայից. նա ունի միայն ատեստացիայից դրական արդյունքներ ունեցած ուսուցիչների թիվը:

ՇԵՆՔԻ 1–9 ՀԱՐԿԵՐԸ ՀԵՂԵՂՎԵԼ ԵՆ

Դիլիջան քաղաքի բնակիչ Գուրգեն Բուռնուչյանը «Ֆեյսբուքի»՝ «Դիլիջանցիք» խմբում զետեղել է քաղաքի Շամախյան 2-րդ Բ շենքից տեսանյութ: Բնակիչը գրել է, որ համայնքապետարանի տվյալներով՝ այդ շենքի տանիքը, իբրեւ թե, նորոգված է: Բազմաբնակարան շենքի 1-9 հարկերը հեղեղվել են: Բնակիչը համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին խնդրել է հարցին լուծում տալ, կամ տալ այն մարդու անունը, ով կարող է խնդիրը լուծել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

«Կասպերսկի» ընկերությունն ստեղծել է բաշխված արդյունաբերական ցանցերի կառուցման եւ պաշտպանության նոր համալիր լուծում: Դրա կազմում են Kaspersky SD-WAN-ը եւ Kaspersky Industrial CyberSecurity -ն (KICS): Ընկերությունը հայտնում է, որ լուծումների համատեղ օգտագործումը թույլ է տալիս կառուցել արդյունաբերական օբյեկտների եւ համակարգերի մոնիտորինգի բաշխված համակարգ ցանկացած տեսակի ցանցերի միջոցով (MPLS, LTE եւ այլն), ապահովել տվյալների փոխանցման անկայուն ուղիներ կամ կառավարման բաշխված վահանակներով տեղային համակարգեր ունեցող աշխարհագրորեն բաշխված օբյեկտներով արդյունաբերական ձեռնարկությունների կիբեռանվտանգությունը, որտեղ լիարժեք KICS for Networks սենսոր օգտագործելու հնարավորություն չկա:

Kaspersky SD-WAN-ը լուծում է՝ նախատեսված խափանումների նկատմամբ կայուն կենտրոնացված կառավարմամբ տարածականորեն բաշխված ցանց կառուցելու համար: Այն օգնում է ապահովել արտադրական գործընթացների անընդհատությունը եւ բարձրացնել դրանց արդյունավետությունը: Kaspersky SD-WAN-ը թույլ է տալիս առանձնացնել տրաֆիկի տարբեր տեսակները եւ գերակայություններ տալ դրան, ինչը երաշխավորում է ցանցի անվտանգ տարանջատումը եւ անխափան աշխատանքը նույնիսկ անկայուն միացումների պայմաններում: Տեղակայման ընթացքում օգտագործվում են անլար կապուղիներ, ինչպես նաեւ կոմպակտ շարժական սարքեր (CPE)՝ ներառյալ հեռավոր օբյեկտներում եւ ենթակառուցվածքների դժվարամատչելի տեղերում: Zero Touch Provisioning տեխնոլոգիան թույլ է տալիս հեռավար կարգավորել ցանցային սարքերը ավտոմատ ռեժիմով, ինչը պարզեցնում եւ արագացնում է նոր արդյունաբերական օբյեկտների միացումը:

Kaspersky Industrial CyberSecurity-ն արդյունաբերական անվտանգության հավաստագրված հարթակ է: Դրա հիմքում են երկու առանցքային բաղադրիչներ՝ KICS for Nodes-ը եւ KICS for Networks-ը: KICS for Nodes-ը նախատեսված է կառավարման ավտոմատացված համակարգերի (ԿԱՀ) Windows եւ Linux ժամանակակից կամ հնացած ՕՀ-ով գործող աշխատանքային կայանների եւ սերվերների պաշտպանության համար, այն նաեւ հարթակի սենսորն է (ԿԱՀ-ի կազմում են տվյալների կառավարման եւ հավաքագրման սերվերները (SCADA), տվյալների պահպանման սերվերները, տվյալների շլյուզները, ճարտարագետների եւ օպերատորների ստացիոնար աշխատանքային կայանները, ճարտարագետների եւ օպերատորների մոբայլ աշխատանքային կայանները, համակարգիչները, որոնք օգտագործվում են տեխնոլոգիական ցանցերի կառավարման եւ արդյունաբերական ավտոմատացման համակարգերի ԾԱ-ի մշակման համար): KICS for Networks-ը պլատֆորմի սերվերն է եւ թույլ է տալիս կառավարել ավտոմատացման համակարգում ներառված ակտիվները, հայտնաբերել դրանց խոցելիությունները եւ տեղեկացնել ռիսկերի մասին, ինչպես նաեւ հայտնաբերել ցանցային անոմալիաները եւ սպառնալիքները, ինչը հատկապես կարեւոր է ծրագրավորվող կոնտրոլերների, ԿԱՀ-ի ռելեային պաշտպանության տերմինալների, արդյունաբերական երթուղիչների եւ կառավարվող կոմուտատորների պաշտպանության համար: Այն թույլ է տալիս նաեւ հայտնաբերել տեխնոլոգիական գործընթացի առանցքային պարամետրերի վտանգավոր փոփոխությունները եւ դրանց անոմալիաները արդյունաբերական պրոտոկոլների փաթեթների խորը վերահսկողության միջոցով: Համատեղ աշխատելով՝ KICS հարթակի երկու բաղադրիչները հնարավորություն են տալիս իրականացնել արդյունաբերական ավտոմատացման համակարգերի ամբողջ ծրագրային-տեխնիկական համալիրի անվտանգության խոր աուդիտ:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ 100-ԱՄՅԱԿ

ԲԻԲԼԻԱԿԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ՝ ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ

Լուչա Գալուստի Հակոբյանը նշում է իր ծննդյան 100 ամյակը. վարդենիսցի վաստակավոր ուսուցչուհին ունի 6 երեխա՝ չորս տղա եւ երկու աղջիկ, 13 թոռ եւ 25 ծոռ:

«Ժողովուրդ» օրաթերթը շնորհավորում է գործընկեր «Վարդենիս» թերթի խմբագիր Լուչա Հակոբյանի ծննդյան 100 ամյակը՝ մաղթելով նրան քաջառողջություն եւ ընտանեկան ջերմություն:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Լուչա Հակոբյանը ծնվել է 1924 թվականի հուլիսի 12-ին ՀՀ Արթիկի շրջանի Վարդաքար գյուղում: Տեղի դպրոցն ավարտելուց հետո՝ 1940 թվականին, ընդունվել է Երեւանի մանկավարժական ուսումնարան, որն ավարտել է 1941 թվականին:

Ուսումնարանն ավարտելուց անմիջապես հետո կամավորագրվել է որպես գթության քույր եւ ծառայել Երեւանի հոսպիտալում մինչեւ 1942 թվականի մայիս ամիսը:

1942 թվականին տեղափոխվել է Տագանրոգի հակաօդային պաշտպանության զենիթային գունդ՝ որպես գնդացրորդ: Ծառայության ընթացքում եւ դրանից հետո ստացել է բազմաթիվ շքանշաններ, մեդալներ եւ պատվոգրեր:

1945 թվականի հուլիսին զորացրվել է ԽՍՀՄ զինված ուժերից: Նույն թվականին ընդունվել եւ 1949 թվականին ավարտել է Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագիտության ֆակուլտետը:

Ինստիտուտն ավարտելուց հետո ամուսնացել է Վարդենիսցի գեղեցկատես երիտասարդի՝ Սաշա Սահակյանի հետ եւ տեղափոխվել Վարդենիս:

Վարդենիսում ընդունվել է թիվ 1 միջնակարգ դպրոց, որտեղ աշխատել է որպես լեզվի ու գրականության ուսուցչուհի: Շրջանի եւ այն ժամանակվա լուսավորության նախարարության ղեկավարությունը, տեսնելով եւ գնահատելով Լ. Հակոբյանի կազմակերպչական ունակություններն ու գիտելիքները, 1952 թվականին նրան առաջարկում եւ նշանակում է Վարդենիսի ութամյա դպրոցի տնօրեն, որը նրա ղեկավարման տարիներին դառնում է միջնակարգ դպրոց:

1965 թվականին ՀԽՍՀ գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով՝ նրան շնորհվում է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչուհու կոչում:

1970 թվականին շրջանի ղեկավարության պահանջով Լ. Հակոբյանը նշանակվում է «Վարդենիս» թերթի խմբագիր, իսկ 1972 թվականին՝ շրջգործկոմի կոլտուրայի բաժնի վարիչ:

1976 թվականին հիվանդության պատճառով ազատվում է զբաղեցրած պաշտոնից: Երկարատեւ բուժումից հետո վերադառնում է մանկավարժական աշխատանքի:

1987 թվականից անցել է վաստակած հանգստի:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 1 մարդ զոհվել է, 26-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2024թ-ի հուլիսի 30-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք.Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով: Թիվ 41 լոտ՝ ոսկյա ջարդոն 18.64 գր. ընդհանուր քաշով, որից 17.7 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 17 գր.) 585 հարգի՝ 291.500 ՀՀ դրամ, 0.94 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 500 հարգի՝ 13.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 305.000 ՀՀ դրամ: Թիվ 42 լոտ՝ոսկյա զարդ 8.9 գր. ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 152.600 ՀՀ դրամ: Թիվ 43 լոտ՝ ոսկյա զարդ 9 գր. ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 154.000 ՀՀ դրամ: Թիվ 44 լոտ՝ոսկյա զարդ 22 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 21.5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 368.700 ՀՀ դրամ: Թիվ 45 լոտ՝ոսկյա զարդ 26 գր. ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 445.800 ՀՀ դրամ: Թիվ 46 լոտ՝ ոսկյա զարդեր 31.5 գր. ընդհանուր քաշով, որից 18 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը 15.7 գր.) 585 հարգի՝ 269,200 ՀՀ դրամ, 13.5 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 585 հարգի՝ 231.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 500.700 ՀՀ դրամ: Թիվ 47 լոտ՝ ոսկյա զարդեր 9.7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9.5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 162.900 ՀՀ դրամ: Թիվ 48 լոտ՝ ոսկյա զարդեր 9.1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 154.300 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ. 043 00 42 27

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՈՎՔԵՐ ԵՆ ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾ

ՆՈՐ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Հայաստանում նոր ատոմակայանի կառուցման նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերել ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Հարավային Կորեան եւ Չինաստանը. այս մասին DW-ի հետ զրույցում ասել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների փոխնախարար Հակոբ Վարդանյանը, որը վերահսկում է էներգետիկայի ոլորտը:

DW-ն հիշեցնում է, որ Հայաստանի ատոմակայանի շահագործման ժամկետը հաշվարկված է մինչեւ 2026թ., սակայն, ըստ նախնական գնահատականների, կայանը կարող է աշխատել մինչեւ 2039 թվականը: Մինչ այս ՀՀ-ն պետք է գործարկի նոր էներգաբլոկ՝ էլեկտրաէներգիայի պակասից խուսափելու համար:

«Հայաստանը դեռ չի կողմնորոշվել նոր էներգաբլոկի մոդելի հարցում. բանակցություններ են ընթանում այն երկրների հետ, որոնք տեխնոլոգիաների պոտենցիալ մատակարարներ են, եւ, ինչպես պարզվում է, դրանք բավականին քիչ են», - նշում է գործակալությունը:

Դեռեւս 2023 թվականի հուլիսին ՀՀ կառավարությունը աշխատանքային խումբ է ուղարկել ԱՄՆ, որը ծանոթացել է ամերիկյան միջուկային տեխնոլոգիաներին, փոքր մոդուլային ռեակտորներին եւ դրանց մշակումներին: Փոքր մոդուլային ռեակտորները, որոնք նաեւ հայտնի են որպես «մինի ատոմակայաններ», ավելի քան մեկ տասնամյակ եղել են մասնագիտական եւ քաղաքական բանավեճի թեմա: Շատ փորձագետներ դրանք համարում են ապագայի խոստումնալից ատոմակայաններ: Այս տարվա փետրվարին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Հայաստանը դիտարկում է մոդուլային միջուկային էներգաբլոկի կառուցման հնարավորությունը եւ որպես կարեւոր փաստարկ մատնանշել դրա անվտանգության բարձր մակարդակը:

«Հայաստանում քննարկվում է մի տարբերակ, երբ նոր էներգաբլոկի հզորությունը չպետք է լինի 600-700 ՄՎտ-ից բարձր»,- ասել է Վարդանյանը՝ հավելելով, որ կառավարությունը հակված է փոքր մոդուլային ռեակտորների կառուցմանը, սակայն այս ճանապարհին գլխավոր խոչընդոտն այն է, որ ներկայում աշխարհում նման տիպի գործող ատոմակայաններ չկան:

Մոդուլային ռեակտորներ նախագծող ընկերությունները, ըստ Հակոբ Վարդանյանի, անընդհատ հետաձգում են նման ռեակտորների կառուցման համար սահմանված ժամկետները:

«Շատերի, այդ թվում՝ ամերիկյան ընկերությունների պարագայում, ամեն ինչ մշակման փուլում է: Առաջ է շարժվել միայն ամերիկյան NuScale ընկերությունը: Այն լիցենզիա է ստացել իր 50 ՄՎտ հզորությամբ էներգաբլոկների կառուցման համար: Բայց NuScale-ը հետաձգել է դրանց կառուցումը եւ որոշել է կառուցել 77 ՄՎտ հզորությամբ էներգաբլոկներ եւ գտնվում է վերջնական լիցենզավորման փուլում»,- ասել է Վարդանյանը եւ հավելել, որ նման էներգաբլոկների կառուցումն արժե շատ ավելի թանկ, քան նախորդ տարբերակը:

Փոխնախարարի խոսքով՝ Հարավային Կորեան նույնպես շահագրգռվածություն է հայտնել Հայաստանին տրամադրել 170 ՄՎտ հզորությամբ մոդուլային էներգաբլոկներ, որոնք նախագծով նման են ամերիկյաններին:

«Բլոկի բարձր հզորությունը, իհարկե, նվազեցնում է ինքնարժեքը, բայց խնդիրն այն է, որ այս մշակումը դեռ լիցենզավորված չէ»,- նշել է Վարդանյանը՝հավելելով, որ լիցենզավորման գործընթացում են նաեւ ռուսական եւ չինական մշակումները:

Փոքր մոդուլային ռեակտորների շահագործման փորձի բացակայության պատճառով ՀՀ կառավարությունը չի շտապում վերջնական որոշում կայացնել:

«Եթե մենք ուզում ենք արագացնել գործընթացը, ապա պետք է 1000 ՄՎտ-ից ավելի հզորությամբ ատոմակայան կառուցենք ավանդական տեխնոլոգիաներով, ինչը զգալիորեն գերազանցում է մեր կարիքները»,- պարզաբանել է փոխնախարար Վարդանյանը:

Նա հավելել է, որ կառավարությունը մտադիր է մինչեւ 2025 թվականի կեսերը վերջնական որոշում կայացնել ռեակտորի մոդելի եւ մատակարարող երկրի ընտրության վերաբերյալ:

DW-ն գրում է, որ ներկայում Հայաստանի էլեկտրաէներգիայի կարիքը կազմում է մոտ 1200 ՄՎտ, որը մոտավորապես հավասար չափաբաժիններով ապահովում են հիդրոէլեկտրակայանները, ՋԷԿ-երը եւ ատոմակայանը: Աճում է նաեւ արեւային կայանների թիվը, սակայն դրանց մասնաբաժինը Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր ծավալում դեռեւս աննշան է՝ 2023 թվականի առաջին կիսամյակի տվյալներով՝ 4%-ից մի փոքր ավելի:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՑՈՒՅՑԱՆԻՇՆԵՐ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՆՎԱՋԵԼ ԵՆ

Իշխանությունների խանդավառ մեկնաբանությունները, թե ՀՀ տնտեսությունն աճ է գրանցել, փակում են խնդիրները տեսնելու ճանապարհը:

Բանն այն է, որ վերջին երկու տարվա ընթացքում ինտենսիվ կերպով բացասական ուղղությամբ են գնում դեպի Հայաստան օտարերկրյա ներդրումները:

Վիճակագրական կոմիտեն հրապարակել է 2023 թվականին ՀՀ տնտեսության մեջ իրականացված օտարերկրյա ներդրումների ցուցանիշները: Ըստ այդմ՝ 2023 թվականին Հայաստանի տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների զուտ ներհոսքը եղել է 138.6 մլրդ դրամ կամ մոտ 347 մլն դոլար: Սա ավելի քան 58 մլրդ դրամով կամ մոտ 30%-ով պակաս է 2022 թվականի ցուցանիշից:

2024 թվականի հունվար-մարտ ամիսների ցուցանիշը համեմատելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ՝ կտեսնենք, որ թվերը բացասական են:

ՀՀ ամենամեծ ներդրումները, մինչեւ անցած տարի, եղել են Ռուսաստանի Դաշնությունից՝ 158 մլրդ դրամ, իսկ այս տարի առաջին եռամսյակում այն կազմել է 17 մլրդ դրամ:

Հայաստանում «Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը», ըստ երկրների, գլխավորում է Ռուսաստանը, որին հաջորդում է Կիպրոսը, Լյուքսեմբուրգը եւ այլ երկրներ՝ համեմատաբար քիչ ներդրումներով:

Ստացվում է, որ ՀՀ տնտեսությունը ակամա հայտնվում է վտանգի տակ, քանի որ դադարում է մրցակցել միջազգային խաղացողների հետ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»

ՎԱՐՊԵՏ ՄՐՑԱՆԱԿԸ՝ ԹԱՐՍԵՄ ՍԻՆԳՀԻՆ

Երեւանի «Ոսկե ծիրան» 21-րդ կինոփառատոնի շրջանակում անցկացված հատուկ ընդունելության ընթացքում փառատոնային «Վարդեւ» մրցանակը հանձնվել է «Տարածաշրջանային համայնապատկեր» մրցութային ծրագրի ժյուրիի նախագահ, հնդիկ-ամերիկացի ռեժիսոր Թարսեմ Սինգհին: Վերջինս հայ հանդիսատեսին առավել հայտնի է որպես Լեդի Գագայի փարաջանովյան գեղագիտությամբ ոգեշնչված «911» երգի տեսահոլովակի հեղինակ: Լեդի Գագայից բացի՝ Թարսեմի ռեժիսորական աչքով են տեսողական մարմին ստացել «R.E.M.»-ի «Losing My Religion» երգը, Վանեսա Պարադիի «Be My Baby»-ն, Լու Ռիդի «What's Good»-ը եւ այլն:

2000-ին մեծ էկրան է բարձրացել Թարսեմի կինոդեբյուտը՝ Ջենիֆեր Լոպեսի գլխավոր դերակատարությամբ կուլտային «Բջիջ» գիտաֆանտաստիկ թրիլերը, որը բազմաթիվ կինոքննադատներ գովել են հոլիվուդյան կինոյի համար անսովոր վառ պատկերային, սիմվոլիկ մտածողության համար:

«Բջիջ»-ից ի վեր Սինգհը հեղինակել է եւս 5 լիամետրաժ ֆիլմ, որոնցից վերջինը՝ «Սիրելի Ջասի» դրաման, համաշխարհային պրեմիերա է ունեցել 2023-ին Տորոնտոյի միջազգային կինոփառատոնում՝ արժանանալով «Platform» մրցանակին, իսկ երեւանյան պրեմիերա տեղի ունեցավ «Ոսկե ծիրան» 2024- ի օրերին:

Մրցանակը «Բեկոն» մսամթերքի գործարանում կայացած արարողությանը Սինգհին հանձնեցին «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հիմնադիր նախագահ Հարություն Խաչատրյանը եւ կինոփառատոնի տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Կարեն Ավետիսյանը: Սինգհը իր խորին երախտագիտությունը հայտնեց մրցանակի կապակցությամբ:

Բացի այդ, Հարություն Խաչատրյանը «Բեկոն Մսամթերք»-ի գործադիր տնօրեն Դավիթ Մարգարյանին պարգեւատրեց Մանթաշյանց ասպետ պատվո արծաթե շքանշանով՝ մշակույթի զարգացմանը խթանելու եւ մեկենասության ավանդույթները վերահաստատելու համար:

Անդրադառնալով GAIFF Pro հարթակին՝ պետք է նշել, որ այն այս տարի եւս անցկացվել է փառատոնի շրջանակներում:

Հարթակի աշխատանքները կայացել են IMS Documentary Film-ի եւ ՀԲԸՄ Հայաստանի հետ համագործակցության արդյունքում՝ վավերագրական ֆիլմերի վրա հատուկ շեշտադրմամբ:

Արդյունաբերության պլատֆորմի շրջանակում ներկայացված էր 15 երկրների կինոգործիչների եւ պրոդյուսերների 17 նախագիծ, որոնցից 12-ը մշակման փուլում են, իսկ 5-ը գտնվում են ընթացիկ փուլում: Շարքը ներառում է նախագծեր Սաուդյան Արաբիայից, Կիպրոսից, Վրաստանից, Իրանից, Լիբանանից եւ Հայաստանից, ինչպես նաեւ համատեղ արտադրության գործընկեր երկրներից՝ ներառյալ Ֆրանսիան, Սերբիան, Գերմանիան, Միացյալ Նահանգները եւ Բելգիան:

Միջազգային ժյուրին մրցանակ է տվել զարգացման փուլում գտնվող Մոջգան Սայադիի «Արյան գին նախագծին: Նախագծին տրամադրվել է $ 5,000 մրցանակ: Հատուկ հիշատակման է արժանացել Լիլիթ Մխիթարյանի՝ «Արարատից տասնչորս ու կես կիլոմետր հեռավորության վրա» ֆիլմը:

Դիանա Կարդումյանի «Լռիր» ֆիլմն արժանացել է ժյուրիի նախաարտադրության եւ գովազդային փաթեթի մրցանակի: Մենտորական մրցանակի է արժանացել Նաիրի Հախվերդիի «Ռելսերի միջեւ» ֆիլմը:

Short Cuts Nest կարճամետրաժ նախագծերի արտադրության հարթակն անցկացվում էր արդեն երկրորդ անգամ. այն հարթակ է հայկական կարճամետրաժ ֆիլմերի նախագծերի համար: Նպատակն է խթանել կարճամետրաժների ստեղծումը Հայաստանում:

Լավագույն կարճամետրաժ ֆիլմի նախագիծ ճանաչվեց Օվսաննա Շեկոյանի՝ «Հանգիստ կապույտ» նախագիծը: Հատուկ հիշատակման արժանացավ Սոնա Խաչատրյանի «Մասունքը»:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ՝ ԱՄՆ–ՈՒՄ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ամերիկյան համերգային շրջագայությունն անցել է լեփ-լեցուն դահլիճներում ու հոտնկայս ծափերի ներքո: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, հունիսի 26-ից 29-ը ելույթներ է ունեցել ԱՄՆ հեղինակավոր համերգասրահներում՝ Բոսթոնի «Սիմֆոնի Հոլ»-ում, Նյու Յորքի «Քարնեգի Հոլ»-ում- Լոս Անջելեսի «Ուոլթ Դիսնեյ» համերգասրահում: Սիմֆոնիկ նվագախմբի հետ որպես մենակատար հանդես է եկել մեծանուն ջութակահար Սերգեյ Խաչատրյանը՝ կատարելով Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտը:

Նշենք, որ առաջին անգամ է, որ հայկական նվագախումբը ԱՄՆ-ում ներկայացել է ամբողջությամբ հայկական ծրագրով՝ Արամ Խաչատրյանի ստեղծագործություններով, որը մեծ ջերմությամբ է ընդունվել ամերիկացի երաժշտասերների կողմից: Նվագախումբը ելույթներից հետո ստացել է ոգեւորող արձագանքներ՝ հայ երաժիշտների կատարողական վարպետության, համերգային ծրագրի վերաբերյալ:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԵՐՖՈՐՄԱՆՍՆԵՐ

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը եւ Rambalkoshe ժամանակակից արվեստի թանգարանը իրականացրել են հանճարեղ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովին նվիրված երաժշտական մուլտիմեդիա-համերգ՝ «Փարաջանով-Ազնավուր. 100 երաժշտական պերֆորմանսներ» խորագրով:

Այն տեղի է ունեցել Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայում: Միջոցառմանը ելույթ է ունեցել ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, «Նռան ձայնը» նախագծի էքսպերիմենտալ երաժշտական կատարումով հանդես են եկել Հովսեփ Աղջյանը եւ Շահեն Խանդկարյանը: Վահան Ստեփանյանի հեղինակած վիդեոարտի ուղեկցությամբ կազմակերպվել է երաժշտական մուլտիմեդիա ներկայացում-համերգ՝ երաժշտական LIVE պերֆորմանս՝ Տիգրան Մանսուրյանի երբեւէ չկատարված օրիգինալ երաժշտությամբ:

Պերֆորմանսը ձայնագրված երաժշտությամբ կթողարկվի հատուկ limited edition վինիլային «Parajanov. Color of Pomegrante by Tigran Mansuryan» սկավառակով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՖԿՍՊԻ ԹԻՄԸ՝ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի շախմատի հավաքական թիմը դարձել է Հունգարիայում ընթացող Եվրոպական համալսարանական խաղերի (EUG) շախմատի առաջնության բրոնզե մեդալակիր:

Հայաստանի թիմի կազմում հանդես են եկել գրոսմայստեր Մամիկոն Ղարիբյանը եւ Արտյոմ Մանուկյանը: Թիմի մարզիչը դոցենտ Երվանդ Հակոբյանն է:

EUG շախմատի առաջնությունն անցկացվել է հուլիսի 10-13-ը Հունգարիայի Միշկոլց քաղաքում: Շախմատի մրցաշարին 17 երկրների ուսանողական թիմեր են մասնակցել:

Հայաստանի մյուս ներկայացուցիչները Եվրոպական համալսարանական խաղերում պայքարը սկսելու են հուլիսի 18-ից հետո:

Խաղերին մասնակցում են ՀՖԿՍՊԻ եւ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողները: ՀՊՏՀ-ի ուսանողները հանդես կգան աղջիկների սեղանի թենիս, իսկ ՀՖԿՍՊԻ ուսանողները՝ պարա սեղանի թենիս եւ թաեքվոնդո մարզաձեւերում:

ՀՊՏՀ սեղանի թենիսի՝ աղջիկների թիմում ներառված են Մանե Ղազարյանը, Ասյա Պողոսյանը եւ Հայաստանի անհատական առաջնության չեմպիոն Ռիմա Խլղաթյանը: Մարզիչը ՀՖԿՍՊԻ դասախոս Մեսրոպ Ղուկասյանն է, որն ընդգրկված է նաեւ Հայաստանի սեղանի թենիսի հավաքականի մարզչական շտաբում:

Պարա սեղանի թենիս մրցաձեւում Հայաստանը կներկայացնի ՀՖԿՍՊԻ ուսանող Գեւորգ Բեգլարյանը: Նրան կուղեկցի մարզիչը՝ Ռիմա Բեգոյանը:

Թաեքվոնդոյի թիմում ընդգրկված են Հայաստանի առաջնությունների տիտղոսակիր մարզիկներ, միջազգային տարբեր մրցաշարերի մասնակիցներ Մելինե Հովհաննիսյանը եւ Դավիթ Թորոսյանը:

Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի նախագահ Հովհաննես Գաբրիելյանը՝ որպես համալսարանական սպորտի եվրոպական ասոցիացիայի անդամ, նշանակվել է ֆուտզալի մրցումների ղեկավար:

Եվրոպական համալսարանական խաղերին մասնակցում են 36 երկրի շուրջ 5000 պատվիրակներ: Մրցաշարն անցկացվում է 20 մարզաձեւից:

ՀԱՂԹԱՆԱԿ

Կամո Ունանյանը նոկաուտով նվաճեց WKN վարկածի գոտին: Հուլիսի 14-ին «Միկա» մարզահամալիրում տեղի ունեցավ «Mixfight 56» MMA մարզաձեւի միջազգային խոշոր մրցաշարը: Այս անգամ մրցաշարի գլխավոր մենամարտն ընթացավ WKN վարկածի գոտու համար: Հայաստանի կարատեի միության հիմնադիր Կամո Ունանյանը մենամարտեց ղազախստանցի մարզիկ Մուհամմեդ Խան Օսպանովի հետ: Ինչպես եւ ակնկալվում էր, նախորդ մենամարտերի նման Կամոն այս անգամ էլ հաղթանակի համար երկար սպասեցնել չտվեց:

MMA մարզաձեւում սա Կամո Ունանյանի 7-րդ մենամարտն էր եւ 7-րդ հաղթանակը:

● *Հուլիսի 19-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Փարիզյան դատավճիռ» դրաման: Տոմսերի արժեքը՝ 2000-4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ արգելանքներ կան իմ նկատմամբ հարկադիրում: Ո՞ւմ դիմել եւ ինչպե՞ս պարզել:

Աննա Սարգսյան (25 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ճշտելու համար, թե արդյոք դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում Ձեր վերաբերյալ առկա են հարուցված վարույթներ, եւ կիրառված են արդյոք արգելանքներ, բավարար է միայն ձեռքի տակ ունենալ սեփական սոցիալական քարտը կամ նույնականացման քարտը, որտեղ նշված է Ձեր հանրային ծառայության համարանիշը՝ ՀԾՀ-ն: Սոցիալական քարտի 10-նիշանոց համարը՝ ՀԾՀ-ն, յուրաքանչյուր քաղաքացու պետության կողմից կյանքում տրվում է մեկ անգամ եւ ենթակա չէ փոփոխման: Արգելանքների առկայության մասին տեղեկություններ կարող եք ստանալ միանգամից մի քանի եղանակով, եւ ամենեւին էլ անհրաժեշտ չէ ներկայանալ Հարկադիր ծառայություն:

ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է այցելել հարկադիր ծառայության պաշտոնական կայք, ֆիզիկական անձի դեպքում՝ ընտրել ՀԾՀ պատուհանը, լրացնել Ձեր սոցիալական քարտի համարը, նշել ստուգիչ կոդը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ ընտրել ՀՎՀՀ պատուհանը, լրացնել իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն, նշել ստուգիչ կոդը եւ սեղմել որոնում: Համակարգը ավտոմատ կերպով կբերի բոլոր այն կատարողական վարույթներն ու անհրաժեշտ տվյալները, որոնք առկա կլինեն Ձեր վերաբերյալ: Եթե որեւէ տվյալներ չգտնվեն, դա կնշանակի, որ Ձեր վերաբերյալ որեւէ վարույթ առկա չէ:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Դատարանից գրություն եմ ստացել, որ բանկն ինձ դատի է տվել վարկը չմարելու համար, եւ կից ուղարկել են «Հայցադիմում» վերնագրով փաստաթուղթ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայցադիմումը բանկի կողմից կազմված այն փաստաթուղթն է, որով ներկայացրել են իրենց պահանջները դատարանին՝ ընդդեմ Ձեզ: Հայցադիմումի մեջ հստակ նշված է, թե, ըստ բանկի, որքան է կազմում պարտքի գումարը, ինչպես է այն գոյացել, եւ ինչ հիմքով է բանկը ցանկանում այն բռնագանձել Ձեզանից: Ստանալով դատարանի որոշումը՝ այդ պահից սկսած՝ երկշաբաթյա ժամկետում, Դուք իրավունք ունեք դատարանին ներկայացնել հայցադիմումի պատասխան, որի մեջ պետք է մանրամասն շարադրեք, թե ինչու եք առարկում բանկի պահանջների դեմ:

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայցադիմումի պատասխանը պետք է ստորագրեք Դուք կամ Ձեր ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած պատասխանին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը եւ անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Հայցադիմումի պատասխանին կցվում են հայցադիմումի պատասխանը, կից ներկայացվող փաստաթղթերը եւ ապացույցները, բանկին եւ գործին մասնակցող մյուս անձանց ուղարկելը հավաստող փոստային անդորրագրերը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի դրոշակակիրները Փարիզի Օլիմպիական խաղերի բացման պաշտոնական արարողության ժամանակ կլինեն բռնցքամարտիկ Դավիթ Չալոյանը եւ լողորդ Վարսենիկ Մանուչարյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11+ 16 +27 + 30
Կոտայքի լեռներ	+ 10 + 13 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21 +30 + 33
Գեղարքունիք	+ 7 + 11 +24 + 28
Լոռի	+ 9 + 14 +25 + 28
Տավուշ	+ 14 + 19 +29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +29 + 33

Արարատ	+ 19 + 21 +34 + 36
Արմավիր	+ 18 + 20 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19 +33 + 35
Սյունիքի հովիտներ	+ 18 + 21 +31 + 34
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 +25 + 28
ԼՂՀ	+ 12 + 15 +24 + 26
Երեւան	+ 20 + 23 + 31 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*